



27-ը սեպտեմբերի 2011թ.

ք. Երևան

### Մամուլի հաղորդագրություն

Այս տարի արդեն 26-րդ անգամ, 1985թ. ի վեր, Եվրոպական մշակութային կոմիտեի 50 անդամ-պետություններ հանդես կգան հանուն եվրոպական ժառանգության ճանաչման՝ Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի հովանու ներքո : Չնայած մշակութային և լեզվական բազմազանությանը՝ Եվրոպայի միլիոնավոր քաղաքացիներ կհամախմբվեն «Եվրոպա. ընդհանուր ժառանգություն» կարգախոսի շուրջ և իրենց այցելություններով նոր շունչ կհաղորդեն հազարավոր հուշարձանների և պատմական վայրերի : Հայաստանը Օրերին կմիանա 2011թ. հոկտեմբերի 1-2-ին՝ «Գրավոր ժառանգություն» խորագրի ներքո : Թեմայի ընտրությունը պայմանավորում են 2012թ. նշվող երկու կարևոր մշակութային իրադարձություններ՝ Հայ գրատպության 500-ամյակը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանի հռչակումը Գրքի համաշխարհային մայրաքաղաք :

Ընդունված է համարել, որ նախապատմական ժամանակաշրջանն ավարտվում է այն ժամանակ, երբ ծնունդ է առնում գրավոր խոսքը : Ըստ էության մարդը մտավ պատմության մեջ, երբ սկսեց գրի առնել պատմություններ և, 1-ին հերթին, իր պատմությունը :

Անհիշելի ժամանակներից մինչ օրս գրավոր մշակույթի անծայրածիր բնագավառում թողած ցանկացած հետք կազմում է մեր գրավոր ժառանգության շտեմարանը՝ կալե աղյուսասալիկներից մինչև պապիրոս, քարե կոթողներից մինչև քանդակազարդ փայտ, մետաքսի գլանափաթեթ, մագաղաթ, արդյունաբերական թուղթ, CD-ROM և համակարգչային ցանցեր : Մի խոսքով, քաղաքակրթությունների և տեխնոլոգիաների հերթափոխում ավելի քան 5 հազարամյակ աշխարհի տարբեր կողմերում թեև գրավոր ժառանգության նեցուկները փոփոխվեն են, բայց գրավոր խոսքը մնացել է որպես հաղորդակցության գլխավոր միջոց՝ տարածության ու ժամանակի մեջ. զիրն է գրանցել ու մեկնաբանել դեպքերն ու իրադարձությունները, սովորույթները, հավատալիքներն ու օրենքները, մարդու աշխարհայացքի ու մտածելակերպի փոփոխությունները : Գիրն է տարածել գիտելիքներ գիտության ու տեխնիկայի, մշակույթի ու արվեստի վերաբերյալ : Գիրն է հազարամյակների խորքից փոխանցել կենդանի հիշողությունը՝ վիմագիր արձանագրություն, ձեռագիր մատյան, հնատիպ գիրք, տպագիր մամուլ, նամակագրություն, մակագրություններ և այլ ու այլ բազմազան ձևեր :

Գրավոր խոսքի ծնունդը, պատկերագրերից մինչև այբուբեններ, անցել է երկար ճանապարհ. կյանքի կարևոր իրադարձությունները մարդը նախ պատկերել է քարաժայռերի վրա : Պատկերներով արված առաջին պարզունակ գրառումները վաղնջական ժամանակներից մեզ հասած ժայռապատկերներն են, որոնց հազարավոր

նմուշներ պահպանվել են ինչպես հյուսիսային Աֆրիկայում, Սկանդինավյան երկրներում, Սիբիրում, Միջին Ասիայում, Կովկասում և այլուր, այնպես էլ՝ Հայաստանում : Արագածի, Գեղամա և Սյունիքի լեռներում հայտնաբերված ժայռապատկերները յուրատեսակ քարե մատյաններ են՝ հազարամյակներ առաջ ապրող մարդու պատկերացումների մասին : **Քարն է** հանդիսացել առաջին գրանյութը : Հիմնականում քարի և աղյուսասալիկների վրա են արված պատմական Հայաստանի սահմաններում հայտնի հնագույն և ամենից տարածում գտած ուրարտական սեպագրերը :

Միանալով «Գրավոր ժառանգություն» նախաձեռնությունների շարքին՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը հանդես կգա բնօրինակ սեպագրերի ցուցահանդեսով՝ շեշտելով ուրարտական գրության տեղը գրավոր մշակույթի ակունքներում : Թանգարանի ներքին բակում կազմակերպված փոքրիկ ցուցահանդեսը այցելուին կառաջարկի նաև 5 թեմատիկ պաստառներ՝ ներկայացնելով գրավոր ժառանգության պատմության հիմնական փուլերը՝ հազարամյակներ առաջ ստեղծված ժայռապատկերներից մինչև «Գուտենբերգ» նախագիծ և էլեկտրոնային գրադարան :

Ցուցահանդեսի բացումը տեղի կունենա 2011թ. հոկտեմբերի 1-ին, ժամը՝ 11 :00-ին : Ցուցահանդեսը կգործի մինչև 2011թ. նոյեմբերի 1-ը :

***Երևանի քաղաքապետարանի***

***«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան***